



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

03. փետրվարի 2017 թ.

թիվ 01 նիստի

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 03-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով.

Վանանդ համայնքի ավագանին որոշեց.

1. Հաստատել Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Վանանդ համայնքի  
ինգամյա. զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող  
տասներորդ օրը:  
Աագանու անդամներ՝

Այլազ Սլոյան

Արթուր Թովմասյան

Քրիստինե Խլղաթյան

Ժիրայր Այվազյան

Գևորգ Մուրադյան

Վանանդի համայնքապետ՝

Զ. Մանուկյան

2017 թ. փետրվարի 3  
գ. Վանանդ

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզի Վանանդ  
համայնքի ավագանու  
2017 թվականի փետրվարի 3-ի  
N03 –Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ՎԱՆԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ  
2017-2021թթ.  
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար Զ. Մանուկյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 03.02.2017թ.թիվ 03-Ն որոշմամբ  
(նիստի ամսաթիվը)

**Վանանդ համայնք - 2017թ.**

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

Վանանդ գյուղը գտնվում է մայրաքաղաքից 75 կմ, իսկ մարզպետարանից 25 կմ հեռավորության վրա: Գյուղը գտնվում է նախալեռնային գոտում, ծովի մակարդակից 1030 մ միջին բարձրության վրա: Գյուղը ունի նախալեռնային չոր մերձարևադարձային կլիմա:

Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ , հաճախ դիտվում է երաշտ և ցրտահարություն:

### Ժողովրդագրություն

#### Համայնքն ունի 1169 բնակիչ, այդ թվում՝

| h/h | Տեղեկատվություն                                      | մարդ |
|-----|------------------------------------------------------|------|
| 1   | Տղամարդիկ                                            | 631  |
|     | Այդ թվում տղամարդիկ կազմում են բնակչության %         | 54   |
| 2   | Կանայք                                               | 538  |
|     | Այդ թվում կանայք կազմում են բնակչության %            | 46   |
| 3   | Թոշակառուներ                                         | 41   |
| 4   | Փախստականներ                                         | 11   |
| 5   | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ                       | 3    |
| 6   | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ                       | -    |
| 7   | Հաշմանդամներ                                         | 43   |
| 8   | Ընտանեական նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ | 33   |
| 9   | Զոհվածների ընտանիքներ                                | 2    |
| 10  | Աշխատունակ բնակչության թիվը                          | 720  |
| 11  | Աշխատանք ունեցողների թիվը                            | 390  |
| 12  | Գործազուրկներ                                        | 28   |
| 13  | Գրանցված ընտրողների թիվը                             | 837  |
| 14  | Ընտանիքների (ծխերի) թիվը                             | 241  |

### **Բնակարանային տնտեսություն**

Համայնքում կա 241 բնակարան 17.2 հազ. մ<sup>2</sup> տարածքով: Համայնքում կան բնակարանների կարիքավոր ընտանիքներ, որոնց քանակը տարեցտարի աճում է, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ ունեն բնակարանի կարիք:

#### **Հոդագրագործումը**

| h/h | Տարածքի անվանումը                                                                  | Տարածքի<br>չափը/հա/ |
|-----|------------------------------------------------------------------------------------|---------------------|
| 1   | Համայնքի հողային տարածքը                                                           | 3131.91             |
| 2   | Գյուղատնտեսության նշանակության հողեր                                               | 2924.29             |
| 3   | Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր | 25.72               |
| 4   | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների համար                 | 16.98               |
| 5   | Հատուկ պահպանվող տարածքներ /այդ թվում պատմական և մշակութային հողեր                 | 0.26                |
| 6   | Հատուկ նշանակության հողեր                                                          | 74.37               |
| 7   | Ջրային տարածք                                                                      | 40.84               |
| 8   | Բնակավայրի տարածք                                                                  | 49.45               |

### **2.1 .Համայնքի ընդհանուր նկարագրությունը**

Վանանդ համայնքը ստեղծվել է 1978 թվականին՝ անմշակ հողերի իրացման և տնկանյութերի արտադրության նպատակով:

Հետագայում աշխատելու և բնակվելու նպատակով Հայաստանի գրեթե բոլոր շրջաններից բնակչությունը հավաքագրվել և ստեղծվել է մի հրաշալի համայնք, որը մեծ կարևորություն է տալիս կրթությանը և ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման բնագավառին:

Համայնքը ունի գրադարան, երկհարկանի դպրոց՝ սպորտ դահլիճով, համայնքապետարան, մանկապարտեզ, փոստ, բուժական ամբուլատորիա: Դպրոցն ունի 166 աշակերտ, մանկապարտեզը առայժմ չի գործում:

Վերանորոգված և կահավորված է բուժ ամբուլատորիան, համայնքապետարանը, մանկապարտեզը:

Համայնքում գործում է << ՆՈՅԱՆ>> հյուրերի գործարանը, կան անհատ ձեռներեցներ, որոնք կազմակերպում են արտադրություն և առևտուր:

Համայնքի ճանապարհները ասֆալտապատվել է դեռևս 1985թ: Տարիների ընթացքում որոշակի հատվածներ վերանորոգվել են ամբողջական և կատարվել է նաև մասնակի վերանորոգում՝ փոսալցման և հարթեցման ձևով:

Շուրջ 14,0կմ երկարությամբ գազատար խողովակաշար է անցկացվել, 135 բնակելի տներ և բնակարաններ գազիֆիկացվել են, կառուցվել է գազամատակարարման մեկ կայան /թՀ/:

2011թ. Վանանդ համայնքում ՀՀ սոց.հիմնադրամի միջոցներով, համայնքապետարանի 5 % համաֆինանսավորմամբ, փոխվել է միջնակարգ դպրոցի երկհարկանի շենքի և սպորտ դահլիճի տանիքը, վերանորոգվել են սան հանգույցները, կատարվել են պատերի ամրացում, շենքի շրջապատի մայթերի ասֆալտապատում :

2010թ «Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան» ծրագրով և համայնքապետարանի 15% համաֆինանսավորմամբ, համայնքում վերակառուցվել է 12.0կմ երկարությամբ ոռոգման ջրատարը: Նույն ծրագրի շրջանակներում հաճախակի կազմակերպվել են «Զրից դեպի շուկա» դասընթացներ:

2010թ համայնքում բնակչության բուժսպասարկում աշխատանքները բարելավելու նպատակով, համայնքապետարանի շենքից 70 մ. քառ. բուժ- ամբուլատորիային տրամադրելու և մասնակի վերանորոգելու պայմանով, UMCOR ամերիկյան հումանիտար օգնության կազմակերպության միջոցներով, վերջնական ավարտին հասցվեց հիմնանորոգումը և բուժ- ամբուլատորիային տրամադրվեց 500 000 դրամի դեղորայքային օգնություն:

Համայնքի խմելու ջուրը սպասարկվում է համայնքապետարանի կողմից: Խմելու ջրի և ջրագծերի սպասարկման աշխատանքների որոշ մասը կատարվում է համայնքի բյուջեի հաշվին:

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

Համայնքի 2016թ. բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկություններ /հազ.դրամ/

|                 | Եկամուտների տեսակները                                        | Տարեկան        |                |
|-----------------|--------------------------------------------------------------|----------------|----------------|
|                 |                                                              | պլան           | կատարող        |
| 1.              | Հողի հարկ                                                    | 10478.7        | 5333.1         |
| 2.              | Գույքահարկ                                                   | 1301.4         | 1340.5         |
| 3.              | Տեղական տուրք                                                | 24.0           | 18.9           |
| 4.              | Տեղական վճար                                                 | 840.0          | 174.9          |
| 5.              | Հողի վարձակալության վճար                                     | 642.5          | 325.7          |
| 6.              | Տարեսկզբի ազատ մնացորդ վարչական բյուջեում                    | 1207.0         | 1207.0         |
| 7.              | Ծառայությունների մատ. վճարներ                                | 1680.0         | 877.6          |
| 8.              | ՀՀ պետական բյուջեից դոտացիա                                  | 8339.1         | 8339.7         |
| 9.              | ՀՀ պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող այլ դոտացիա | 1231.7         | 1231.7         |
| 10.             | Տարեսկզբի ազատ մնացորդ ֆոնդային բյուջեում                    | 6405.7         | 6405.7         |
| 11.             | Հողի օտարումից եկամուտ                                       | 4000.0         | 6064.9         |
| <b>Ընդամենը</b> |                                                              | <b>36150.1</b> | <b>31349.7</b> |

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է ----- %:

| h/h | Հիմնարկներ                              | Տարեկան |         |
|-----|-----------------------------------------|---------|---------|
|     |                                         | պլան    | կատարող |
| 1   | Օրենսդիր և գործադիր մարմիններ           | 15914.1 | 10912.0 |
| 2   | գյուղատնտեսություն                      | 197.4   | 197.4   |
| 3   | Աղբահանություն                          | 1840.0  | 200.0   |
| 4   | Զրամատակարարում                         | 3986.5  | 3733.4  |
| 5   | Նախադպրոցական կրթություն                | 2001.6  | 2001.6  |
| 6   | Փողոցների լուսավորում                   | 400.0   | 400.0   |
| 7   | Գրադարան                                | 1004.8  | 1004.8  |
| 8   | Սոցիալական պաշտպանություն.              | 400.0   | 400.0   |
| 9   | Վարչական սարքավորումներ                 | 500.0   | -       |
| 11  | Այլ սարքեր և սարքավորումներ             | 1030.0  | 80.0    |
| 12  | Տրանսպորտային սարքավորումներ            | 900.0   | 900.0   |
|     | Պահուստային միջոցներ ֆոնդային բյուջեում | 7975.7  | -       |
|     | Ընդամենը                                | 36150.1 | 19631.8 |

Համայնքում զբոսաշրջության հետաքրքրություն ներկայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ չկան:

Համայնքն ունի, մեկ երկահարկ միջնակարգ դպրոց՝ հիմնովին վերանորոգված, ներկայումս ունի 166 աշակերտ նախատեսված է 740 աշակերտի համար, ուսուցչական կոլեկտիվը բաղկացած 37 հոգուց:

Համայնքում գործում է մեկ բուժ ամբուլատորիա, կոլեկտիվը բաղկացած 2 հոգուց:

Համայնքում ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 39 ընտանիք:

## 2.5. Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Վանանդ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար խոչնդոտները և առնվազն դժվարությունները կարող են առաջանալ ներքոհիշյալ խնդիրներից.

Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար նպատակահարմար է բնակչության շրջանում ակտիվացնել՝ կազմակերպել վոլեյբոլի, վազքի, բոքսի և այլ սպորտային խմբակներ, հավաքներ, մրցույթներ, պարապմունքներ:

Համայնքում անհրաժեշտություն է այգիների հիմնումը, աղբահանության հաճախակիացումը, համանքային գերեզմանատան պահպանումը՝ ցանկապատումը, բարեկարգումը, կանաչապատումը, որոնց համար անհրաժեշտ է ֆինանսական միջոցներ:

Համայնքում պետության պաշտպանության իրականացումը, աղետների ռիսկերի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությունը ու քաղաքացիական պաշտպանությունը իրականացնելու, կազմակերպելու համար անհրաժեշտ է տեխնիկա և տրանսպորտային միջոցներ:

Ոռոգման ջրատարի ներհամայնքային համակարգի երկաթյա խողովակներ են, որը կառուցվել է 1980 ական թվականներին և գտնվում է անմխիթար վիճակում, որի պատճառով ունենում ենք ոռոգման ջրի կորուստ, հետևապես ստացվում է տնամերձ ըողամասերի մշակաբույսերի անարդյունավետ մշակում, բերքատվության կորուստ:

Համայնքում բնակչության ծնելիության և բազմազավակության խթանման համար պակասում է համայնքի բյուջեի գումարները, յուրաքանչյուր նորածնի մորը և , բազմազավակ մայրերին միանվագ դրամական օգնություն տրամադրելու համար:

Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացման, արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է լրացուցիչ ֆինանսական մասհանումներ:

Համայնքում չի իրագործվում բարեգործություն, որը կխթաներ համայնքում մշակութային, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման և ֆինանսական անկախության գործում:



## 2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների (ՈւժՀՍ) վերլուծություն

| Ուժեղ կողմեր                                                                                                                                                                                                                                                                           | Թույլ կողմեր                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>1.Համայնքի աշխարհագրական դիրքը/բնակլիմայական պայմանները/<br/>2.աշխատուժի բավարարվածությունը<br/>3.Համայնքապետարանի, մանկապարտեզի, բուժ-ամբուլատորիայի, փոստի և աշխատանքների բարվոք վիճակը<br/>4.Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարումը</p> | <p>1.Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի որոշակի հողակտորների անմշակ լինելը<br/>2.Մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայությունը<br/>4.Համայնքում կանաչ գոտիների պակասը<br/>5.Իրականացվող երիտասարդական ծրագրերի պակասը<br/>6.Հողի հարկի գանձումների դժվարությունները<br/>7.Համայնքի բնակիչների անվճարունակություն<br/>9.Փողոցների ասֆալտապատում,վերանորոգում</p> |
| Հնարավորություններ                                                                                                                                                                                                                                                                     | Սպառնալիքներ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                       |
| <p>2.Ջերմոցային տնտեսության զարգացում<br/>3.Խաղողագործության, պտղաբուծության զարգացում<br/>4.Տնկանյութի արտադրություն</p>                                                                                                                                                              | <p>1.Բնակլիմայական պայմանները՝ ա/ գլոբալ տաքացումը<br/>բ/ երաշտը<br/>գ/ ցրտահարությունը<br/>դ/ կարկտահարությունը<br/>2.Բնակչության արտագաղթը</p>                                                                                                                                                                                                                                   |

### **3. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում**

#### **3.1 Համայնքի զարգացման տեսլականը**

Վանանդ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում՝ համայնքը անհատ ներդրողների հետ համագործակցությամբ կունենա ջերմոցային տնտեսություն՝ 2.0հա, որտեղ կաճեցվեն լոլիկ վարունգ, ծաղիկներ: Նշված աշխատանքների կատարման համար կներդրվի 700 000 000 ՀՀ դրամ և արդյունքում կստեղծվեն մի քանի տասնյակ աշխատատեղեր: Համայնքը կսկսի կայուն զարգանալ, յուրաքանչյուր աշխատող կստանա ամսական մոտ 130 000ՀՀ դրամ աշխատավարձ, կավելանա բնակչի իրական եկամուտները, կկրճատվի աղքատությունը:

Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, խմելու ջրի ներքին ցանցի նորոգման, ներհամայնքային ոռոգման ջրատարի նորոգման համար համայնքի բյուջեից կծախսվի 20.5մլն դրամ: Ցուցանիշների արժեքները սահմանվել են տարեկան կտրվացքով:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 10%-ի աճ, իսկ ոռոգման համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 25%-ով:

Աղքատության շեմից ցածր գտնվող տնտեսությունների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին՝ 10% :

Համայնքի սեփական եկամուտների աճը՝ 25.0%:

**ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1**  
**«Ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգում»**  
(Ծրագրի անվանում)

|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                  |                    |         |         |         |         |
|---------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------|--------------------|---------|---------|---------|---------|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը     | Ճանապահների և փողոցների բարեկարգում, փոսալցում                                                                                                                                                                                                                                                                                                     |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի անմիջական նպատակ                           | Ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                        | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ |         |         |         |         |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | 2016             | 2017               | 2018    | 2019    | 2020    | 2021    |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | -                | 500 000            | 500 000 | 500 000 | 500 000 | 500 000 |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ                      | 1.                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |                  |                    |         |         |         |         |
|                                                   | Ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                        | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ |         |         |         |         |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | 2016             | 2017               | 2018    | 2019    | 2020    | 2021    |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                  | 200 000            | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                  |                    |         |         |         |         |
|                                                   | 2.                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |                  |                    |         |         |         |         |
|                                                   | Ցուցանիշներ                                                                                                                                                                                                                                                                                                                                        | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ |         |         |         |         |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | 2016             | 2017               | 2018    | 2019    | 2020    | 2021    |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                  | 300 000            | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 |
|                                                   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի հիմնական գործողությունները                 | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ավազի ձեռք բերում<br>1.2. Տեխնիկայի վարձակալում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Ավազի փոում<br>2.2 Ավազի հարդարում ,ամրացում                                                                                                                              |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի բյուջեն                                    | Ընթացիկ ծախսեր` 1 000 000 դրամ<br>Կապիտալ ծախսեր` 1 500 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն` 2 500 000 դրամ                                                                                                                                                                                                                                              |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Աշխատուժ, նյութեր և տեխնիկա                                                                                                                                                                                                                                                                                                                        |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի հիմնական ռիսկերը                           | Ճանապահների և փողոցների բարեկարգում                                                                                                                                                                                                                                                                                                                |                  |                    |         |         |         |         |
| Ծրագրի հիմնական շահառուները                       | Համայնքի բնակիչները                                                                                                                                                                                                                                                                                                                                |                  |                    |         |         |         |         |
